

ԳՆՈՒՆԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՂՄԻ ԵՎ ԳԻՆՈՒ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՇՈՒՐՁ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գնունի նախարարական տոհմը հնագույններից էր: Մովսես Խորենացուն հասած տեղեկությունների համաձայն, նրա հիմնադիրը Ասորեստանի Սենեքերիմ (Սինախերիբ՝ 705—681 թթ. մ. թ. ա.) թագավորի հայրասպան որդիներից մեկն էր՝ Ադրամելեքը, որը շարագրանքի շարունակության մեջ կոչվում է արդեն Արգամոզան (կան նաև Արգամոզան, Արգամոլան և այլ տարբերվող անուններ): «Ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս եւ զԳնունւոյս»: Խորենացու վկայակոչած պատմագիրը ասորի Սար Աբաս կատինան է՝ հեղինակը Գնունիների ասորեստանյան ծագման վարկածի: Խորենացու այս հաղորդումն արդեն հիմք է տալիս կասկածի տակ առնելու այս վարկածի ճշմարտացիությունը, որովհետև առանց բացատրության է տեղի ունենում Ադրամելեքի վերափոխումը Արգամոզանի: Վերջինս իսկապես կարող էր համարված լինել Գնունիների նախնին, բայց ոչինչ ընդհանուր շունենալ ասորեստանցի Ադրամելեքի հետ:

Գնունիների ծագման բացահայտումը, մեր կարծիքով, անհնար է իրագործել առանց նրանց տոհմանվան ստուգաբանության: Այստեղ կս առաջնություն պատիվը պատկանում է մեր պատմահորը: Նա գրում է. «Գիտեմ եւ Վինունիսը գինի ունիս, որ զարծանի թագաւորին պատրաստէր զքմպելիսն. որ սբանչելի իմն զիպեալ եղև ըստ գործոյն եւ անունն. քանզի պատրաստէր զքմպելիսն արբայի յընտիր եւ ի համեղ գինեաց, ունէր եւ կոշումն անուանն Գին. ընդ որ կարի զուարճացեալ, ասեն, Վաղարշակ՝ կարգէ ի թիւ նախարարութեան ազգաց»², Խորենացու բերած Գին/Գնունի, գինի շարքը կարելի է համարել նույնարմատ և իմաստարանական նույն բնից ծագած հետևյալ բառերով: Գինակ «խաղողի մի տեսակ, դեղնականաչ գույնով, հաստ կեղեվով, մեծ՝ կլոր հատիկներով, որից կախան են պատրաստում», Գինեծաղիկ «խաղողի ծաղիկը, որից հետո երևում է ազոխը», Գինուկ «գինու խաղող, բարակ կեղևով, սպիտակ մանր հատիկներով»³, նաև «Գինն. գինին է»⁴:

Հնդեվրոպական լեզուների «խաղող» և «գինի» նշանակող շատ բառերի հիմքում *uei-/*wi- արմատն է՝ «ոլորել, փաթաթել, գալարել, հյուսել» նախնական իմաստով: Սրանից են առաջացել գալարվող-փաթաթվող բույսերի և ոլորվող-հյուսվող շիվեր ունեցող ծառերի՝ մասնավորապես խաղողի վաղի և ուռնու, անվանումները: Իմաստային զարգացման մեզ հետաքրքրող փուլն են ներկայացնում հայերեն հիշյալ բառերի մեծամասնությունը, ինչպես նաև հուն. οἴνος, ἀμπέλι «վաղ» (Hesych), լատին. vitis. և հին սլավ. vinjaga (<*uein-ǫk') նույնիմաստ բառերը⁵:

Գնունիների պալատական մատովակներ լինելու հանդամանքը կասկած

1 Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց, Ա, իգ:

2 Նույն տեղում, Բ, է:

3 Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան. հ. 1, Երևան, 1944, էջ 435, 436, 437: Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 1, Երևան, 1971, էջ 558:

4 Բառգիրք Հայոց, քննական բնագիրը Հ. Մ. Ամալյանի. Երևան, 1975, էջ 66, ծան. 183:

5 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Т. II. Тбилиси, 1984, с. 649—650. Հ. Աճառյան. Նշվ. աշխ., էջ 554:

ի հարուցում⁷, Բայց նրանց տոհմն այնքան ազդեցիկ է եղել, որ իր ձեռքին է պահել շատ ավելի ընդգրկուն և կարևոր մի գործակալություն՝ հազարապետությունը: Փավստոս Իուզանդը Արշակ 11-ի կողմից նախարարական տոհմերին իրենց գործակալություններում հաստատելու առթիվ անդրադառնում է նաև Գնունիներին. «Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրի»⁸: Գնունիների բուն տիրույթները գտնվել են վանա լճից հյուսիս-արևելք ընկած ԱղիոՎիտ և Արբերանի գավառներում, որտեղ նրանք հիշատակվում են ինչպես վաղ, այնպես էլ հասուն միջնադարի հայ մատենագիրների կողմից⁹: Իսկ այդ գավառները մինչև մեծ եղեռնը հայտնի էին ինչպես իրենց ընտիր հացահատիկով, այնպես էլ ընտիր խաղողով և ընտիր գինիներով¹⁰:

Այս նույն գավառը (կամ նրա մի մասը) ուրարական արձանագրություններից մեկում կոչվում է Quria¹¹: Այս տեղանունը ևս, Գնունի տոհմանվան նման, անխզելի կապի մեջ է գավառի անտեսության առաջատար ճյուղերից մեկն հանդիսացած խաղողագործություն-գինեգործության հետ: Տեղանունը տրոհվում է qur- և -ia բաղադրիչների: Սրանցից առաջինի համարժեքն է հայ. *կուտ- արմատը, իսկ երկրորդինը՝ -ի վերջածանցը¹²: Ըստ այսմ, Quria տեղանվան համարժեքն է հայ. կուտի բառը, որը ծածկաբար նշանակում է «գինի»¹³: Սրանց սրմատակիցներն են խաղողագործություն-գինեգործությանն առնչվող հետևյալ բառերը: Կոնկ (<կուտի-ակ) «վայրի խաղողի մի տեսակ, սև գույնով, որից ներկ են պատրաստում գինին ներկելու համար»¹⁴: Կուկապ տալ (<կուտ-ա-կապ) «խաղողի որթի նոր արձակած ճյուղերը ձողի վրա կապել, որպեսզի դեպի վեր բարձրանան»¹⁵: Կոնկ (<կուտ-ձ-ել) «կարասի տակի գինին կամ ամանի մեջ եղած մի հեղուկ ուրիշ ամանով քաշել, ցամաքեցնել»¹⁶: Կուրմգի (<կուտ-մուգ-ի) «ստորին հատկության գինի, որ ստացվում է զանազան գինիների տակույքներով իրար խառնելուց»¹⁶: Հմմտ. նաև հին հայկական Կուտիճան (<կուտ-իճ-ան)

7 Ն. Ար. ոսնց. Հայաստանը Հուստինիանոսի գարաշրջանում. Երևան, 1987, էջ 338:

8 Փավստոս Իուզանդ. Պատմութիւն Հայոց, Գ, ք:

9 Թովմա Արծրունին նրանց հիշատակում է Առքերանիում՝ Երիկավ բերգով (Գ. իր), իսկ նրա շարունակողը ԱղիոՎիտում գտնվող Արձեշը կոչում է «բաղաբ Գնունեաց գաւառին» (Ն. Ար. ոսնց. նշվ. աշխ., էջ 338): Մովսես Խորենացու հիշատակած Շահապիվան լիւրը, որը Գնել Արշակունին ժառանգություն էր ստացել իր մորական Պապ Գնել Գնունուց (Խորենացի. Գ. իր), լինելու էր ԱղիոՎտի և Մաղկոտնի (այստեղ էր Շահապիվան բաղաբը) սահմանագլխին գտնվող Մաղկեռլ լիւրը:

10 Բ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. 1, Երևան, 1986, էջ 462:

11 Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 41, 123.

12 Անպաղրային բազմաթիվ տեղանուններում վկայված -ia տեղանվանակերտ վերջածանցը Լեռագայում վերածվել է -ի-ի (Հ. Կարագյոզյան. Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները.— «Լրարեր հասարակական պատմությունների», 1978, № 10, էջ 62, 64—65, 72—73): Հմմտ. հ.-և. -(i) ձիգական վերջածանցը:

13 Ստ. Մալխասյանց. նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1944, էջ 494:

14 Նույն տեղում, էջ 490:

15 Նույն տեղում, էջ 489:

16 Նույն տեղում, էջ 491: Կոնկ բառում ձ-ն աճական կամ վերջածանց է, Հմմտ. լի-ն, կի-ն-ն, կոր-ն և այլն (տե՛ս Հ. Ստեբիասյան. Աճականը հայերենում. Երևան, 1986, էջ 92: Հայոց լեզվի պատմական քերականություն. հ. 2, էջ 78):

17 Ստ. Մալխասյանց. նշվ. աշխ., հ. 2, էջ 490: Այս բառի երկրորդ բաղադրիչը՝ -մգ- <-մուգ- հայ. մուղ արմատն է, որը նշանակում է «ինչ որ մզված է, քրալի հյութ, որ ստացվում է մրգերը՝ միսը հն մզելուց՝ քամելուց» (նույն տեղում, հ. 3, Երևան, 1944, էջ 313):

գավառի անունը¹⁷, որը համընկնում է Ուրմիա լճի արևմտյան ափի Gilzan-գինեվետ երկրին (կամ նրա մի մասին)¹⁸:

Այս բառերի հիմքում ընկած *կուտ արմատը ծագում է հ.-ե. *gor-ից (*ger-«դարձնել», «գալարել, ոլորել»), որից են, ըստ է. Աղայանի, նաև կուտ-ը (կուել, կոանալ) և կուտն-ը (կոնակ)¹⁹: է. Աղայանի մատնանշած բառերը գալիս են արմատի «դարձնել» իմաստից, իսկ խաղողագործություն-գինեգործությանն առնչվող հիշյալ բառերը՝ «գալարել, ոլորել» իմաստից: Ընդ որում, *կուտ-ից բուսանուններ կերտող -լի վերջածանցով (հմմտ. ուտ-ի, ցախ-ի, այգ-ի, բարդ-ի և այլն)²⁰ ստացվել է *կուտի՝ առկա կուտի «գինի» և կոեկ (<*կուտի-ակ) բառերում:

Գնունի նախարարական տոհմի համատեղած մատուցակի և հազարապետի պաշտոնների երբեմնի սերտ կապի տեսանկյունից ուշագրավ է այն հանգամանքը, որ ո՛չ միայն Գնունի տոհմի անունն ունի իր «խաղողագինիական» գուգահեռները, այլև նրա զբաղեցրած հազարապետի պաշտոնի անունը: Հազարապետ < հազար-ապետ. որտեղ հազար-ը «1000» չի նշանակում (Գնունիները հազարյակի պետեր չէին, այլ մատուցակներ և երկրի գլխավոր տնտեսներ): Հմմտ. հազարի (<հազար-ի) «խաղողի մի տեսակ, սև կամ սպիտակ, մանր ու երկայն հատիկներով, բարակ կեղևով. գինու խաղող»²¹: Այս անվան տարբերակն է խազերի (<խազեր-ի) «խաղողի մի տեսակ, մեծ, կլոր՝ վարդագույն հատիկներով ու բարակ կեղևով, որից գինի են պատրաստում»²²: Այս բառերում առկա ն//խ համապատասխանության տեսանկյունից հմմտ. հաղբ//խաղբ, հարբովս//խարբովս, հեղձուկ//խեղձուկ, ճահիճ//ճախիճ և այլն²³: Բացառված չէ, որ այս հազար//խազեր-ը ևս եղել է խաղողագործություն-գինեգործությանն առնչված և հետագայում մոռացության մատնված մի տերմին²⁴:

Գնունի նախարարական տոհմը Աղիովիտ և Առբերանի գավառներից բացի տիրույթներ է ունեցել նաև Այրարատ նահանգի Արագածոտն գավառում, Շիրակ գավառի հարևանությամբ: Ս. Ագոնցը նույնիսկ կարծում էր, թե հենց սա է եղել նրա բնօրրանը: Բայց նա նաև շեշտում է, որ այստեղ նրանք բնակվել կարող էին միայն որպես պալատական մատուցակներ²⁵, որովհետև Այրարատ արքունի երկիր էր: Ուրեմն, սա կարող էր լինել միայն Գնունիների «ձեռակալ իշխանության երկիրը», որը Արշակունյաց թագավորության վերացումից հետո էր գարձել նրանց ժառանգական տիրույթներից մեկը: «Մաստարա գյուղի հինավուրց եկեղեցում պահպանվել է մի արձանագրություն, որի մեջ ասված է, թե եկեղեցին կառուցվել է Գնունյաց Թեոփոս եպիսկոպոսի օրոք: Այս հանգամանքը պարզաբանում է ներսեսի Վարքում պահպանված այն տեղեկությունը, ըստ որի Գնունիները հիշվում են Շիրակի նախարարների թվում, և անկասկած ապացուցում է Գնունի տոհմի առնչությունը Արագածի ստորոտի բնակավայրերին»²⁶:

17 Ս. Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 35, 108

18 Н. В. Арутюнян. Указ. соч., с. 64.

19 է. Բ. Աղայան. Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ. Երևան, 1974, էջ 102—103, 107—108:

20 Հ. Աճառյան. նշվ. աշխ., հ. 4, Երևան, 1979, էջ 627:

21 Ստ. Մալխասյանց. նշվ. աշխ., հ. 3, էջ 9:

22 Նույն տեղում, հ. 2, էջ 227:

23 Г. Б. Джаукян. Очерки по истории дописменного периода армянского языка. Ереван, 1967, с. 310.

24 Եթե սրա հիմքում հաղբ//խաղ արմատն է, իսկ -ուր//եր վերջածանցներ են, ապա հմմտ. խազուոզ «նոր գինի» (Ստ. Մալխասյանց. նշվ. աշխ., հ. 2, էջ 227), խազմուզ <խուզմուզ, որտեղ -մուզ-ը մզել բայի արմատն է՝ առկա նաև վերոհիշյալ կորմզի (<կուտ-մուզ-ի) «ստորին հատկության գինի» բառում:

25 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 338:

26 Նույն տեղում, էջ 337—338:

Արագածոտնի և Շիրակի հարակից շրջաններում խաղողագործություն-գինեգործության հինավուրց արմատներ ունենալու և զարգացման բարձր մակարդակի հասած լինելու վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ և տարաբնույթ տվյալներ: Պատահական չէ, որ հին հայկական ավանդությունները հենց Արագածին և Արագածոտնին են առնչում Արարատյան դաշտը առաջինը բնակեցնող-յուրացնողին՝ Հայկ նահապետի Արամանյակ որդուն²⁷: Այսօր էլ «Արարատյան գոտու Աշտարակի շրջանն արտագրում է հումք՝ Ոսկեհատ, Ճիլար, Մուսկատ թնդեցրած գինիների, իսկ Աբովյանի և Թալինի շրջանները՝ Ոսկեհատ, Սոխալի, Լեթածիթելի կոնյակի, շամպայն և սեղանի թեթև գինիների արտադրության համար»²⁸: Նույն այս շրջաններն են լինելու միավորված Շարապխանի անվան տակ: Առաջել 'Իավրիժեցի Շահ-Աբասի զորքերի ավերած և բնակիչներին բռնագաղթի ենթարկած հայկական գաղառների թվում (ոսիլի Համգալիմանի (հյուսիս-արևելքից) և Կարսի ու Կաղզը-վանի (հարավ-արևմուտքից) միջև հիշատակում է «զՇարապխանէն, զՇիրակուան, զՋարիշատ»²⁹: Սրանցից Շիրակուանը Շիրակն է՝ Շիրակավանով, Ջարիշատը հյուսիսային Վանանդն է՝ Ջարիշատով, իսկ Շարապխանեն, բնականաբար, լինելու է Արագածոտնի Շիրակին հարող մասը: Ըստ երևույթի, այս անունը գալիս է Արևելյան Հայաստանում պարսկական տիրապետության հաստատման ժամանակներից, որովհետև շարապ-խանն պարսկերեն բառ է և նշանակում է «գինետուն», «մառան»:

Հայոց պալատական մատովակների՝ Գնունի նախարարական տոհմի, ակունքների բացահայտման համար մեզ ուղեցույց կարող է ծառայել այն հանգամանքը, որ հնագույն Փոքր Ասիայում նույնպես գոյություն ունեն «գլխավոր մատովակի» պաշտոնը: Այն զբաղեցնում էին արքայական գերդաստանի ներկայացուցիչները, հաճախ հենց արքայազուները: Խեթական Տելեպինու թագավորի (1525—1500 թթ. մ. թ. ա.) «Հռչակագրում» հիշատակվում է այդ պաշտոնը մ. թ. ա. 17—16-րդ դդ. սահմանագլխին զբաղեցրած Խանտիլին, որը Մուրսիլի I-ի (1620—1590 թթ. մ. թ. ա.) փեսան էր, նրան սպանողն ու նրա հաջորդը³⁰: Մուրսիլի II-ի օրոք (1345—1315 թթ. մ. թ. ա.) «գլխավոր մատովակ» էր արքայազն Նուվանցան³¹: Չնայած խեթական արքունիքում պաշտոնյաների կարգավիճակը և ֆունկցիաները այլևս պայմանավորված չէին գոյատևող ծիսակարգով, բայց, ինչպես Վ. Վ. Իվանովն է նշում, ծիսական ֆունկցիաները պահպանվում էին և դրանք իրագործողները տիտղոսների հետ միասին վկայում էին այդ պաշտոնները կրողների հնում ունեցած ֆունկցիաների մասին³²:

Դասակարգային պետության առաջացումից հետո հայ իրականության մեջ ևս ընթանալու էին նման գործընթացներ: «Գլխավոր մատովակի» պարտականությունները կատարելու էին այդ պաշտոնը իրենց մենաշնորհը դարձրած արքայազուները, որոնք, ըստ այդմ, տիրույթներ էին ունենալու երկրի խաղողագործական-գինեգործական զարգացած մշակույթ ունեցող շրջաններում: Ելակետային այս դատողությամբ էլ խաղողագործական-գինեգործական հարուստ ավանդույթներ ունեցող Աղլուվիտ և Առեբրանի գավառների նախարարական բնիկ տոհմին՝ Գնունիներին, համարում ենք սերունդները

27 Խորենացի. Ա, ժբ:

28 Գ. Գրվելյան. Այգեգործություն.—Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 341:

29 Առաքել Դավրիժեցի. Պատմութիւն. Վաղարշապատ, 1884, էջ 31—32:

30 О. Р. Герни. Хетты. М., 1987, с. 25. В. Г. Ардзинба. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 153.

31 В. Н. Хачатрян. Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики). Ереван, 1971, с. 81, 84.

32 В. В. Иванов. Эволюция знаков-символов.—Тезисы летней школы по вторичным моделирующим системам, 3, Тарту, 1968, с. 5—7.

ուրարտական արքայազունների, ներքոշարադրյալը գալիս է հիմնավորելու մեր առաջադրած այս վարկածը:

Ինչպես ուրարտական գարաշրջանում արքայական գնդապետների անդամների և արքայազունների տիրույթներ դարձած Աղիովիտ և Առբերանի գավառները⁸⁰ դրանց սերունդներին էին պատկանում նաև հաջորդ հարյուրամյակներում: Իրավիճակը սկսել էր փոխվել Արտաշես 1-ից (189—160 թթ. մ. թ. ա.) սկսած, երբ նա հարթունիս գրավեց Աղիովիտ գավառի մի մասը և իր հոր՝ Զարեհի, անունով այստեղ հիմնադրեց Զարիշատ քաղաքը⁸¹: Բայց նրա օրոք այստեղ Արտաշիսյան արքայազուններ հաստատված լինել չէին կարող, որովհետև Արտաշիսյան դինաստիայի հիմնադիրը նրանց հատկացրել էր առանձին տարածք՝ Հաշտյանք գավառը (առանձին էին նաև արքայական գերդաստանի անդամներին և արքայազուններին հատկացված տիրույթները և՛ ուրարտական և Երվանդունյաց թագավորություններում): Հաշտի առնենք նաև այն հանգամանքը, որ Արտաշիսյան գերդաստանի անդամների և արքայազունների թիվը դեռևս սեփական չէր լինելու, այնպես որ Հաշտյանքը լրիվ բավարարելու էր նրանց պահանջները: Հաշտյանքի առթիվ ավելացնենք, որ սելևկյանների տիրապետության տակից դուրս եկած և նրանց դեմ պայքարի ելած Արտաշես 1-ը չէր կարող անտեսած լինել նրա ռազմավարական նշանակությունը: Հաշտյանք գավառը ներառում էր Հայկական Տավրոսի այն հատվածը, որտեղ գտնվում էին Կոնստուց կոչված հայտնի լեռնանցքները:

Արքայազունների Հաշտյանք գավառում բնակեցման փաստը Մովսես Խորենացին վերագրում է ավանդական վաղարշակ արքային: Իսկ ապացուցված պետք է համարել, որ Խորենացու վաղարշակը հավաքական կերպար է՝ «բաղկացած Արտաշես Ա-ի, Տրդատ Ա-ի և այլ հայ իշխողների առանձին գծերից»⁸⁵: Ահա համապատասխան վկայությունը. «Եւ քանզի բազում ունէր ևստերս՝ պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի գաւառն Հաշտենից, եւ ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. ի նոսա թողլով զշէսս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն եւ ռոճկաց կարգելոց յարքունուստ: Եւ միայն գառաջին որդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեան եւ զնորին ուստր, զոր անուանեաց Արտաշէս եւ յով սիրեաց...»⁸⁶:

Այսպիսով, Աղիովիտ և Առբերանի գավառների հին արքայազունները չէին կարող Արտաշիսյաններ լինել: Առավել ևս Արշակունիներ լինել չէին կարող, որովհետև սրանք միայն 1-ին դարի կեսին էին մուտք գործել Հայաստան: Բայց նրանք նաև Երվանդունիներ չէին: Երվանդունի արքայազունների տիրույթները գտնվում էին Վասպուրականի Երուանդունիք/Արուանթունի գավառում, Հայոց Ձոր (Խոշաք) գետի հովտում⁸⁷: Արդեն գավառի անունը խոսում է դրա մասին, մանավանդ որ վաղ միջնադարում այստեղ էր բնակվում նույնանուն՝ Երուանթունի/Երմանթունի նախարարական տոհմը: «Կահնամակի» համաձայն, այս տոհմն զբաղեցնում էր 50-րդ գահը, իսկ «Ձորանամակում» հիշատակվում է հայոց բանակի հարավային դռան ստորաբաժանումը կազմած զորաջոկատների շարքում (տրամադրում էր 300 հեծյալ)⁸⁸: Երուանդունիք/Արուանթունի գավառում բնակված Երուանթունի/Երմանթունի նախարարական տոհմը, բնականաբար, սերած էր լինելու Երուանդունի/Արուանդունի արքայատոհմի այն արքայազուններից, որոնց որպես տիրույթ հատկացված է եղել այդ գավառը:

80 Ն. Ա. դ. ո. ց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 194:

81 Հայ ժողովրդի պատմություն (ութ հատորով), հ. 1, Երևան, 1971, էջ 542, Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 52:

82 Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 674:

83 Խորենացի. Բ, ր:

84 Ս. Երեմյան. Նշվ. աշխ., էջ 51, 109: Թովմա Արծրունի. Գ, Ժգ:

85 Ն. Ա. դ. ո. ց. Հայաստանի պատմություն, էջ 281, 283:

Աղիովիտ և Առբերանի գավառներում հողերի նոր բռնագրավումը իրականացվել և արդեն Արտաշեսյան արքայազուններին տրամադրելու գործընթացը սկսվել էր Արտաշես I-ի որդի և հաջորդ Արտավազդ I-ի օրոք (160—մոտ 120 թթ. մ. թ. ա.): «Յետ Արտաշեսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, եւ հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ եւ Առբերանոյ, զի մի բնակեացեն յԱյրարատ ի կալուածս արքայի. բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա»³⁹: Այս Տիրանը Տիգրան I-ն է (մոտ. 120—95 թթ. մ. թ. ա.), որի թագավոր դառնալուց հետո «...եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից՝ ասեն. «Ընդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ»: Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի դաւառն Աղիովտի եւ Առբերանոյ: Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հաւասար տրոհել յինքեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթուի՝ գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն Աղիովտի եւ Առբերանոյ»⁴⁰: Քանի որ այս իրադարձութիւնները տեղի են ունեցել մինչև Հայաստանում Արշակունիների հաստատումը, ուստի Արշակունի-ն այստեղ պարզապէս «արքայատոհմի» իմաստ ունի:

Աղիովտի և Առբերանի հին արքայազունների տիրույթների բռնագրավումը շարունակվել է, նրանց արտոնութիւնների սահմանափակումով, նաև հետագայում: Արտավազդ II-ի (մ. թ. ա. 54—34 թթ.) առնչությամբ Խորենացին վկայում է. «Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր եւ զքորս ի գաւառս Աղւոյ ովտի եւ Առբերանոյ, թողլով ի նոսս զմասն արքունի որ ի շէնս այնց դաւառաց, հանդերձ առանձին մտից եւ ոռճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատուականագոյն եւ առաւել թագաւորազն քան զայնս Արշակունիս. միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի»⁴¹: Պարզից էլ պարզ է, որ Արտաշեսյան և Արշակունի արքայազունները միայն հետագայում են հաստատվել Աղիովտ և Առբերանի գավառներում: Իսկ քանի որ տեղի հին արքայազունները նաև Երվանդունիներ չէին (որոնք Երուանդունիք գավառում էին), ուրեմն, նրանք կարող էին լինել միայն ուրարտական արքաների սերունդները, մասնավորապէս որ այդ գավառները ժամանակին եղել են ուրարտական թագավորական դինաստիայի արքայազուններին պատկանող գավառներ: Այսպիսով, կասկած չի կարող, որ տեղի բնիկ նախարարական Գնունի տոհմը սերում էր հենց նրանցից:

* * *

Վերոշարադրյալը առավել հիմնավոր է դառնում, երբ ի նկատի ենք առնում, որ Ուրարտուի թագավորական դինաստիան և նրա որդեգրած ու պետական կրոնի վերածած խալդի աստծու պաշտամունքը ևս սերտ առնչութիւն են ունեցել խաղողագործութիւն-գինեգործութիւն հետ: Ուրարտական և ասորեստանյան թագավորների թողած արձանագրութիւնները ցույց են տալիս, որ Ուրարտուի թագավորները վիթխարի միջոցներ ու ջանքեր են ներդրել ոչ միայն իրենց պետութիւն հիմնական տարածքում, այլև նորանվաճ շրջաններում խաղողագործութիւն արմատավորման և զարգացման համար⁴²:

³⁹ Խորենացի. Բ, կա: Հավանաբար այս ժամանակ է Առբերանիում բնակված հին արքայազունների սերունդներից բռնագրավվել Առեսսո ավանը նրան հարող լճափով: Տեղի ձրկնորսարանները Արշակունիների ժամանակ պատկանում էին արքունիքին (Քուրանդ, Գ, ր):

⁴⁰ Խորենացի, Բ, կբ:

⁴¹ Նույն տեղում, իբ:

⁴² Н. В. Арутюнян. Земледелие и скотоводство Урарту. Ереван, 1964, с. 102—117.

Հիշատակության է արժանի նախ և առաջ «ՄՏերի դռան» հանրահայտ արձանագրությունը, որի ավարտական մասում կարդում ենք. «Իշպուհինե Սարդուրդին (և) Մինուա Իշպուհնորդին խաղողուտ նոր հիմնեցին: Ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր): Իշպուհինե Սարդուրդին (և) Մինուա Իշպուհնորդին ապարանք (°) նոր հիմնեցին, հաստատեցին կարգ.— Երբ ծառերը (...) հալոցին երեք ուխար թող զոհարերվեն, երեք ուխար՝ աստվածներին բուրրերը խաղողը (...), հալոցին երեք ուխար թող զոհաբերվեն, երեք ուխար՝ աստվածներին բուրր. երբ խաղողը քամեն (°)՝ հալոցին երեք ուխար թող զոհաբերվեն, երեք ուխար՝ աստվածներին բուրր. գինի թող զեղեն»⁴³, Իսկ Մինուայի Գյուզակի արձանագրության մեջ կարդում ենք. «հալոց տիրոջն իր այս արձանագրությունը Մինուա Իշպուհնորդին գրեց: Երբ հալոցան գարպասները կառուցեց (և) ամրոց կառուցեց հոյակապ, հաստատեց «հալոցի բաղաբ» անունը: Հիմնեց այս խաղողուտը, հիմնեց անտառ: «Մինուայի խաղողուտ» (է) անունը»⁴⁴:

Վանա լճի հյուսիս-արևելյան ափերը բռնած Արմարիլի նահանգ ներխուժած իր բանակի շարագործությունները Ասորեստանի Սարգոն II (722—705 թթ. մ. թ. ա.) թագավորը ներկայացնում է հետևյալ կերպ. Արմարիլի «լի ամբարները բացեցի, նրանց անշափ հացահատիկով իմ զորքին կերակրեցի: Բերքը՝ նրա ժողովրդի հույսը, և խոտը՝ նրա անասունների կյանքը, խառույկի նման այրեցի, շրջակայքը անապատի պես դարձրի: Նրանց այգիները ես հատեցի, նրանց անտառները կտրեցի, նրանց խաղողի վազերը կույտերի վերածեցի և կրակով այրեցի: Շարժվելով դեպի Արբու՝ Ուրասայի հայրական տուն և (դեպի) Րիար՝ Իշտարդուրիի (Սարգուտիի) քաղաքը գնացի, դրանց շրջակայքի յոթ բնակավայրերը, որտեղ բնակված էին նրա եղբայրները, նրա թագավորական սերմը (և որտեղ) պաշտպանությունը ուժեղ էր, այդ քաղաքները ավերեցի, հողին հավասարեցրի, նրա հալոցի աստծու սրբավայրը խառույկի նմանեցրի, նրա տաճարը կործանեցի»⁴⁵:

Միայն բերված օրինակներն էլ բավական են գաղափար կազմելու համար, որ հալոցի պաշտամունքը անխզելի կապի մեջ է եղել խաղողագործություն-գինեգործության հետ, որին առաջնակարգ դեր է վերապահված եղել նրա ծիսակարգում: Հմտ. հալոցի գլխավոր սրբավայր Մուծածիր քաղաքի մոտ գտնվող լեռան Alluria անունը⁴⁶ և հայ. աղուրի՝ «խաղողի որթի տաշտաթաղ անելու ճյուղը»⁴⁷: Ուրարտական աստվածներին զոհաբերում էին եղներ (ցուլեր) և ուխարներ (խոյներ), բացառյալ հալոցի, որին նաև այծեր (ուլեր) էին զոհաբերում: «ՄՏերի դռան» արձանագրության մեջ զոհերի թվարկումն սկսվում է հալոցին մատուցվող վեց ուլերով: «Վեց» թվի առնչությունը ուշադրության է արժանի Մ. Իսրայելյանի այն դիտողությունը, թե Ուրարտում գոյություն են ունեցել 6000-անոց գնդեր, թե էրեբունին ունեց 6600-անոց կայազոր, թե Վանի շինարարական աշխատանքները, ըստ Մովսես Խորենացու, Շամիրամը կատարել է 6000 վարպետների միջոցով և այլն, իսկ այդ թվերը բացահայտում են «որոշ օրինաչափ հարաբերություն»⁴⁸:

հալոցի պաշտամունքում բացահայտվող «վեց» թվի խորհուրդը, մեր կարծիքով, պայմանավորված է հալոցի նաև խաղողն ու գինին անձնավորող

⁴³ Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 46—47 (այս և հաջորդ կրկու հատվածների թարգմանությունը Հ. Կարազյուզյանինն է):

⁴⁴ Նույն տեղում, էջ 50—51:

⁴⁵ Նույն տեղում, էջ 31—32:

⁴⁶ Н. В. Арутюнян. Топонимика Урарту, с. 22—23.

⁴⁷ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Նշվ. աշխ., հ. 1, էջ 135:

⁴⁸ Մ. Ի ս ռ ա յ է լ յ ա ն. Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն. Երևան, 1971, էջ 77 և ծան. 31. Էրեբունի կայազորի մարտիկների 6600 (6000+600) թվի տեսանկյունից հմտ. հոմեոցիների կողմից պաշարված Տիգրանակերտ մտած Տիգրան Մեծի 6000-անոց հեծելազորը և Վարդան Մամիկոնյանի զլխավորած 66000-անոց (60000+6000) հայոց բանակը Ավարայրի ճակատամարտում:

աստվածություն լինելու իրողությունը: Հայտնի է, որ ապրիլից մինչև նոյեմբեր տևող խաղողի վեգետացիան ընթանում է վեց փուլով. 1) հյուսիսարևմուտքյան (լաց) մինչև բողբոջման սկիզբը, 2) վերջինիցս մինչև ծաղկման սկիզբը, 3) ծաղկման սկզբից մինչև նրա վերջը, 4) պտղակալման սկզբից մինչև պտղի հասունացման սկիզբը, 5) վերջինիցս մինչև պտղի ֆիզիոլոգիական հասունացումը, 6) այնուհետև մինչև տերևաթափի վերջն ու ձմեռային հանգստին անցնելը⁴⁹:

Այժմի և խաղողի առասպելաբանական կապի առնչությամբ ուշագրավ են Դիոնիսոսին՝ փոքրասիական-բալկանյան խաղողի ու գինու աստվածությունը, նվիրված հնագույն ծեսերը: Պուտարքոսը բերում է նրան նվիրված կրոնական մի տոնախմբության շքերթի հետևյալ նկարագրությունը. «Առջևից տանում են լայնաբերան տակառով գինի և խաղողի վազ, նրա հետևից քաշելով բերում են այծը, որոնց հետևից գալիս է զամբյուղով թուզեր բերող մարդը»⁵⁰: Պատահական չէ, որ հին հույները Դիոնիսոսին հաճախ պատկերում էին կամ գինի, կամ այծի տաք արուն խմելիս: Առասպելաբանության տեսանկյունից դրանք համարժեքներ լինելով, վկայում են խաղող/այծ առասպելաբանական դուգորդման մասին նաև Դիոնիսոսի պաշտամունքում: Դիոնիսոսի և հալդիի պաշտամունքներում առկա ընդհանրություններից մեկն էլ «6» թվին խորհրդապաշտական իմաստ մերագրելու մեջ է: Հին հույների պատկերացմամբ իր շքախմբով շրջագայության ելած Դիոնիսոս-Բաքոսի ոսկեգոծ կառքին լծված էին լինում երեք զուգ գազաններ. առաջին լուծը հովազներ էին, երկրորդը՝ ընձառյուծներ, երրորդը՝ առյուծներ⁵¹: Իսկ 2+2+2=6: Ի գեպ, Դիոնիսոսի զուգ առյուծները հիշեցնում են հայդիի կենդանական խորհրդանիշ առյուծին: հալդին պատկերվում էր նաև առյուծի վրա կանգնած վիճակում, իսկ նրան ձուլված մահաանները դարդարում էին առյուծներից բաղկացած երկու շրջանակաձև շարքեր⁵²:

Դիոնիսոս/հալդի պաշտամունքային ընդհանրությունների ծագումնաբանական հենքի մասին է վկայում հետևյալ փաստը: Հին հույները ոչ միայն Դիոնիսոսին, այլև նրա պապին՝ Կադմոսին (Κάδμουσ), վերագրում էին ոչ հունական ծագում: Կադմոսն համարվում էր Արևելքի ժամանած գաղթական «փյունիկեցի»⁵³, սակայն նրա իրական հայրենիքը լինելու էր սեպագիր պարսկերենի Kadmuhi հրկիրը, կամ տոնվաղն առնչվելու էր նրան: Հմմտ. Κάδμουσ և Kadm-uhi: Դիոնիսոսի պապի անվանն առնչվող և Արևմտյան Տիգրիսի աջափնյակում գտնվող Kadmuhi-ի⁵⁴ խաղողագործական-գինեգործական հնագույն օջախներից մեկն էր, ուստի Ասորեստանի կազմում հայտնվելուց հետո դառնել էր թագավորության «գլխավոր մատուցակի» («մեծ տակառապետի») տիրույթը⁵⁵: Դիոնիսոսի այս պապը իր անվամբ առնչվում է նաև հայկական Կադմոսին՝ Հայկ նահապետի թոռանը⁵⁶, որի տիրույթը Հարավային Հայաստանի «Տունն Կադմեայ» կոչված շրջանն էր⁵⁷, և Կադմեացի

49 Ս. Խ ա շ ա տ Ր Յ Ա Ն. Խաղող.—Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 5:

50 Plut., De cupiditate divitiarum, VIII.

51 Ян Парандовский. Мифология. М. 1971, с. 103—104.

52 Б. Б. Пиотровский. Искусство Урарту. Л., 1962, с. 66—67, 73.

53 В. Н. Ярхо. Кадм.—Мифологический словарь. М., 1991, с. 268. Ян Парандовский. Указ. соч., с. 162—163.

54 В. Н. Артюнян. Топонимика Урарту, с. 98—99.

55 Նույն տեղում, էջ 98:

56 Խ ո Ր Ե Ն Ս Գ Յ Ի. Ա. Ժ, Ժա, Ժր: «Հայկ՝ շինել անդ տուն բնակութեան կալուածոց եւ տայ ի ծառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկոյ» (Խ ո Ր Ե Ն Ս Գ Յ Ի. Ա. Ժ): «Եւ ապա ետ զնա Հայկն կալուած Ժառանգութեան Կապմևայ թոռին իւրում որդոյն Արամեանկայ» (Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն. Երևան, 1939, էջ 3):

57 Խ ո Ր Ե Ն Ս Գ Յ Ի. Ա. Ժ, Ժա, Ժր:

նախարարական տոհմին, որը «Զորանամակի» համաձայն, գլխավորում էր հայոց բանակի հարավային դրան ստորաբաժանումը⁵⁸։ Մեր Կադմոսը լինելով սեպագրային Kadmuhi երկրի («գլխավոր մատովակի» տիրույթի) անվանադիրը⁵⁹, դրանով իսկ առնչություն էր ունենալու խաղողագործության և գինեգործության հետ։

Դիոնիսոսի և խաղողի ու գինու անձնավորում մյուս աստվածների նման իսլաղին ևս օժտված էր մեռնելի-հառնելու և ծերանալ-երիտասարդանալու հատկությամբ։ Դրանցով պայմանավորված իսլաղին մեզ ներկայանում է այնպիսի ընդդրվուն խոթյամբ՝ որպես բնության և բուսական աշխարհի մշտնջենական հոլովույթը կորհրդանշող հավերժ կենսունակ մի աստվածություն։ Բնականաբար, ուրարտական պատկերագրության մեջ իսլաղին հանդես է գալիս ինչպես պատանու և ծերունու կերպարանքով, այնպես էլ հասուն տղամարդու տեսքով⁶⁰։ Հիշենք նաև նեոսես Շնորհալու մշակած «խաղող» պատասխանով միջնադարյան հանելուկը.

«Զարմանք ասեմ, բեզ, սիրելի,
Կին մի ծնավ գուզ որդի,
Տղայն ունի ալիք ծերի,
Երբ ձերանալ՝ դառնալ սկիծալ։

Իսլաղի խաղողն ու գինին անձնավորող աստվածություն լինելու վկան է նաև նրա անունը։ Hal-di անյուն-ձի բաղադրիչը «աստված» է նշանակում (հմմտ. հ.-և. *dhēs և *del-), իսկ hal- բաղադրիչը նույնական է խաղող (<խաղ-ող> բառի առաջին՝ խաղ-, բաղադրիչի հետ (իսկ -ող-ի համար հմմտ. ող-կոլոզ, ոլ-ոռն, ուլ-ն՝ հողն. ուլ-ուն-բ և ուրարտական առձանագրությունների լեզվի ul-di «խաղող, խաղողուտ» բառերը)։ Haldi, *Haldi (որից Haldita), Al-di միևնույն դիցանվան երեք տարբերակների գոյությունը հնարավորություն է տալիս խաղող-ից բացի այս ռիտանյան սուրբին բաղադրիչին առնչելու նաև հայերեն հետևյալ բառերը։ 1) Խալայ (<խալ-ալ) «ակցիզ, գինու, խաղողի և աղու վրա դրված հարկ», 2) Խալաղի (<հալ-աղ-ի) «խաղողի մի տեսակ, կարմիր կամ սպիտակ գունով, երկայն հատիկներով, հաստ կեղևով, ուտելու խաղող», 3) Խալիորուկ (<հալ-ի-որ-ուկ) «ուտելու խաղողի մի տեսակ, սպիտակ գունով, կլոր հատիկներով, բարակ կեղևով»⁶²։ Այս բառերում առեա իսկ համապատասխանությանը կարելի է հանդիպել հ.-և. ալ լեզուներում ևս։ Մեր բառերի հետ հնչյունական և իմաստային առնչություններ դրսևորող բառերից են հին հունական γάλα-ր («մարութ, անխառն գինի») ⁶³ և հին հնդկերեն hāla-ն ու hālahalī-ն («գինի, լեկոտ») ⁶⁴։

Հավանական լեռնաշխարհում խաղողագործությունն սկիզբնավորվել է դեռևս էնեոլիթի դարաշրջանում (մ. թ. ա. V—IV հազարամյակներ)։ Դա այդպես էլ լինելու էր, որովհետև խաղողի որթը վաղի վիճելում ալստեղ աճում է նաև այսօր⁶⁵։ Իդուր չէ, որ ինչպես Աստվածաշունչը, այնպես էլ հայկական ավան-

58 Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն, էջ 282։

59 Гр. Капанцяп Историко-лингвистические работы к начальной истории армян. Ереван, 1956, с.256

60 Г. Д. Вардумян. Дохристианские культуры армян.— Հայ ազգագրություն և բանահյուսություն, 18, Երևան, 1991, էջ 78։

61 Ա. Մնացականյան. Հայ միջնադարյան հանելուկներ. Երևան, 1980, էջ 299։

62 Հ. Աճառյան. Եզվ. աշխ., հ. 2, Երևան, 1973, էջ 313։ Ստ. Մալխասյանց. Եզվ. աշխ., հ. 3, էջ 11։

63 Древнегреческо-русский словарь, составил И. Х. Дворецкий. Т. II. М., 1958, с. 1761.

64 Wörterbuch Sanskrit-Deutsch, von Prof. Dr. Dr. habil. Klaus Myllus. Leipzig, 1980. S. 577.

65 К. Х. Кушнарева, Т. Н. Чубиншвили. Древние культуры Юж-

դուժյունները Արարատյան լեռներում (աշխարհում) հանգրվանած նույն նահապետին են վերագրում առաջին որթը տնկելու, առաջին գինին քամելու և այն առաջինն ըմպելու պատիվը⁶⁶։ Քե՛րբոնզի դարում, թե՛ նրան հաջորդած հազարամյակներում խաղողն ու գինին կարևոր տեղ են ունեցել մեր նախնիների կենցաղում և պաշտամունքներում։ Մեծամորի հնավայրի պեղումները՝ հետևանքով բացված բրոնզեդարյան սրբարաններից մեկում հայտնաբերվել է կավակերտ բրիժ-հացեր, ծիսական հաց թխելու օջախ ու սաջ, իսկ նրանցից բացի, նաև նրբագեղ երկարավիզ սափորներ, որոնք «անշուշտ վկայում են գինու հեղման արարողություններ»⁶⁷։ Հայաստանում ևս լայնորեն տարածված է եղել խաղողի ու գինու պաշտամունքը։ Դրա մասին են խոսում հայաստանյան դիցարանի տվյալները։ Խեթական թագավոր Սուպիլուլիումա I-ի (մ. թ. ա. 1380—1346 թթ.) և Հայաստանի ցեղասպետ-արքա Հուկանայի միջև կնքված դաշինքի տեքստին ուղեկցող դիցանվանացանկում հիշատակված են հայաստանյան 14 աստվածություններ։ Դրանցից երեքը ամպրոպային բնույթ ունեն (Ս-եր են), երկուսը կուլում են՝ Սnagašta- (զբաղեցնում են դիցանվանացանկի 9-րդ և 12-րդ տեղերը), իսկ մնացածները տարբեր աստվածություններ են⁶⁸։ Մեզ հետաքրքրողները Unogasta-ներն են։ Ինչպես դիցանվանացանկն է ցույց տալիս, հայաստանյան պաշտամունքների մեջ նրանց պաշտամունքը երկրորդ տեղն է զբաղեցրել, զիջելով միայն ամպրոպային բնույթի աստվածությունների պաշտամունքին։

Նախ, այս դիցանվան գոյություն ունեցող ստուգաբանությունների մասին։ Գր. Ղափանցյանը, դիցանունը տրոհելով Unag- և astl- բաղադրիչների, վերջինս համարեց զուգահեռ հայերեն -աստ/եստ/իստ վերջածանցի (հմմտ. զգ-աստ, իմ-աստ, առագ-աստ և այլն)⁶⁹։ Զահուկյանը այս առթիվ նկատում է. «Եթե հայաստանյան -asta-ն իրոք կապված է խեթ. -astl-ի, սլավ. -ost-ի և հայ. -աստ-ի հետ, ապա Unagastas-ը կարող է հանդես գալ որպես դիցանուն վերացական երևույթի անձնավորման հիման վրա, որ հնարավոր է, բայց քիչ հավանական... Հայաս. -astas-ի հարցի լուծումը շատ բանով կախված է Unag(a)-ի բնույթից»⁷⁰։ Վերջինիս համար նա ենթադրում է կամ հ.-ե. *ongu «օծել» նախածեր, կամ խեթ. nakki-«ծանր», nah(h)-«վախենալ, հարգել, պատվել, ակնածել, պաշտել, շրջահայաց լինել» բառերին ազգակից մի նախածեր⁷¹։ Մեր կարծիքով, Unagasta- աստծու բնույթի պարզաբանման և unag-ի ստուգաբանության բանալին տալիս է հայ. բաբունակ բառը⁷², որը նշանակում է «երկայնատարած ուռն որթուղ, եւ ոտք ալ-լոց» տնկոց»⁷³։ Բար- և -ունակ բաղադրիչների տրոհվող այս բառի երկրորդ բաղադրիչը ներկայացնում է օրինաչափորեն փոփոխված ձևը նախնական *unag-ի։ Աճառչանը, ընդունելով հանդերձ, որ բաբունակ բառի առաջին բաղադրիչը նույնական կարող է լինել բար «պտուղ» բառի հետ, կասկածի տակ է առնում նրա երկրորդ բաղադրիչը այնպիսի բառերի -ունակ բաղադրիչների հետ նույնացնող տեսակետը, որոնք յաղահայտում են իրենց ծա-

ного Кавказа. Л., 1970, с. 170; Б. Б. Пнотровский. Ванское царство (Урагу). М., 1959, с. 133—142; Ս. Հ. Սարգսյան. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան, 1967, էջ 235:

⁶⁶ Մենդոց, Թ, 20—24: Ա. Ղանալանյան. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 157, 169, 336:

⁶⁷ Մեծամոր (ուսումնասիրություն 1965—1966 թթ. պեղումների տվյալներով). Երևան, 1973, էջ 123:

⁶⁸ В. Н. Хачатрян. Указ. соч., с. 148:

⁶⁹ Гр. Капалцян. Указ. соч., с. 95, 306:

⁷⁰ Ք. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. Նախադարյան ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 328, ծան. 20:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Ն. Աղոնց. Հայաստանի պատմություն, էջ 46:

⁷³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 1, Երևան, 1979, էջ 467:

դոմը ունենալ բայի արմատից: նա գրում է. «Շատ հարմար է թերևս այս ստուգարանությունը, մանավանդ որ բար «պտուղ» բառը գործածական է արդի բարբառներում... Բայց կարելի է ոսկեդարում գտնել այսպիսի մի բարդություն, որ հետիններին է հատուկ. հմմտ. պարունակ, շարունակ, շնորհունակ են»⁷⁴: 2. Աճառյանի կասկածը տեղին է: Մեր կարծիքով, իսկապես, բարունակ-ի -ունակ բաղադրիչը կապ չունի հիշյալ բառերի -ունակ բաղադրիչների հետ և ներկայացնում է *վենակ բառի տարբերակը: Հմմտ. վերջ և ուրջ, *վերդ և ուրդ, վառ-ել և ուռ-ան և այլն⁷⁵:

Հնչյունական, նույնպիսի համապատասխանություն-համարժեքություն գոյություն ունեն Նախաքարական նախալեզվում⁷⁶: Այն իր որոշակի արտացոլումներն է գտել մի շարք ժառանգ լեզուներում⁷⁷: Որ հեռավոր անցյալից են գալիս ինչպես բարունակ բառի բար- և -ունակ բաղադրիչները, այնպես էլ բառն ինքն ամբողջությամբ, վկայում է մ. թ. ա. 8-րդ դարի սեպագիր արձանագրություններում հիշատակված Barunakka բնակավայրի անունը⁷⁸ (անվանակիր բնակավայրը տեղադրվում է Ուրմիա լճից արևելք ընկած շերջանում)⁷⁹: Bar-unakka հմմտ. բուն ուրարտական Արմարիի և Այադու նահանգների šini-unak և Ardi-unak բնակավայրերի անունները⁸⁰:

Ինչպես հիշյալ տեղանունների -unak- բաղադրիչները, այնպես էլ Unagašta- գիցանվան *unag- բաղադրիչը հայերեն բարունակ բառի -ունակ բաղադրիչի նման իրենց հիմքում ունեն հ.-ե. *uejn-ak' նախաձևի տարբերակը: Սրանից է ծագել նաև հայ. գինակ-ը («կախանի խաղողի մի տեսակ») և, ըստ Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի, ինչպես հին սլավ. vinjaga-ն («խաղողի վազ»), այնպես էլ այն նախաձևը, որից ենթադրվում է նախաքարթվեական *wenaq («խաղող, խաղողուտ») բառը⁸¹: Վ. Գեորգիևը հնդեվրոպական կամ սեմական որևէ լեզվից է փոխառյալ համարում վրաց. wenaχl (հին վրաց. venaqi), սվան. venaq, մենգր. և լադ. binexi «խաղող, խաղողուտ» բառերը⁸²: Գ. Ա. Կլիմովը եզրակացնում է, որ «խաղողագործական և գինեգործական տերմինները քարթվեական հողի վրա չեն ստուգաբանվում և մշակութային բառերի տպավորություն են թողնում»⁸³, որ դրանք հարավից կատարված փոխառություններ են լինելու⁸⁴, Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի ավելացնում են, որ «առանց կասկածի չի կարող որոշվել քարթվեական հենց *γwino- «գինի» բառի հնությունը քարթվեական լեզուների ներսում, ինչպես նաև նրա առնչությունը այնպիսի ածանցյալ կազմություն-

74 Հ. Աճառյան. նշվ. աշխ., հ. 1, էջ 429:

75 Գ. Ղափանցյան. Հայոց լեզվի պատմություն (հին շրջան). Երևան, 1961, էջ 151—153:

76 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Указ. соч., т. 1, с. 223, 225, 227.

77 Հ. Աճառյան. նշվ. աշխ., հ. 3, էջ 600: Գ. Ջահուկյան. Հայերեն և հնդեվրոպական հին լեզուները. Երևան, 1970, էջ 16, 18, 51, 153:

78 Սեպագիր տեղանուններում երբևից հանդիպող k//q համապատասխանությունը (հմմտ. Kulmera=Qulmeri, Kumuh--Qumaha, Kutl=Qutl և այլն) վկայում է, որ ո՛չ բոլոր դեպքերում է ճիշտ սեպագիր. k-ն տառադարձել նայ. f-ով, իսկ q-ն՝ k-ով:

79 Н. В. Арутюнян. Топонимика Урарту, с. 54. Հմմտ. Ստրաբոնի վկայությունը Մարաստանի մասին. «Կասսյան զոհերից ներքև՝ ցածր հողեր և ձորեր կան, որոնք շատ փարթամ և ամենաբեր են. բացի ձիթենուց» (Strabo, XI, 13, 17, «Ստրաբոն», Քաղց և Թարգմանեց Հ. Աճառյան. Երևան, 1940, էջ 51):

80 Н. В. Арутюнян. Топонимика Урарту, с. 34, 235. Տեղանունների տրոհումը բաղադրիչների կատարել է Ն. Վ. Հարությունյանը (նույն տեղում):

81 Т. В. Гамкрелидзе. В. В. Иванов. Указ. соч., с. 649, прим. 2.

82 В. Георгиев. Исследования по сравнительно-историческому языкознанию. М., 1958, с. 214—215.

83 Г. А. Климов. Несколько картвельских индоевропейских. —Этимология 1979. М., 1961, с. 172—173.

84 Նույն տեղում, էջ 170:

ների հետ, ինչպիսիներից է բացահայտ փոխառյալ բնույթի զուցաբերող *wenaq-* «խաղողուտ» բառը⁸⁵: Այսքանից հետո մնում էր ավելացնել, որ քարթվելական լեզուների համապատասխան բառերը փոխառյալ են հայերենից, ինչը «գինի» նշանակող բառերի վերաբերյալ վաղուց ասվել է⁸⁶: Հայերեն գի, գինի բառի հնդեվրոպական ծագման և վրացերեն ղվիա-ի հայերենից փոխառյալ լինելու առթիվ Հ. Աճառյանը գրում է. «Վրաց. ղվիա և թուշ. ղվիէ իսկ հոմանիշները փոխառյալ են հայերենից և ներկայացնում են հայերենի $q < w$ նախաձայնի նախավոր վիճակը, ճիշտ ինչպես գինի» վրաց. ղվիէի, ղվիւն բառի մեջ⁸⁷:

Ինչպես հնագիտական նյութը, այնպես էլ ուրարտական և ասորեստանյան արձանագրությունները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհում ուրարտական դարաշրջանում ևս լայն տարածում է ունեցել խաղողագործություն-գինեգործությունը և նրա վրա խարսխված խաղողի ու գինու պաշտամունքը: Թե ինչքան ընդգրկուն է եղել վերջինս, կարելի է գաղափար կազմել անգամ հետևյալ օրինակներով: Կարմիր Բլուրի (Թեյշեբախի) պեղումների ընթացքում հայտնաբերված 9 մառաններում թաղված կարասների տարողունակությունը մինչև կես միլիոն լիտր գինի է⁸⁸: Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը հայտնում է, որ Մուծածիբը (Արդինի) գրավելուց և կողոպտելուց հետո իր հետ Ասորեստան էր տարել մի մեծ պղնձե կաթսա, որը խալգիին գոհ մատուցելուց առաջ ուրարտական թագավորները լցնում էին գինով: Այդ կաթսայի տարողունակությունը 80 լիտր էր⁸⁹:

Որ արժեքներից դարաշրջանում ևս Հայկական լեռնաշխարհը եղել է գինեգործության առաջնակարգ օջախներից մեկը, վկայում են ինչպես Պերսեպոլիսի բարձրաքանդակները, որտեղ հարկատու հայերը (մյուս հարկատու ժողովուրդների ներկայացուցիչների շարքում երրորդն են) պատկերված են ձի և սափորով գինի մատուցելիս⁹⁰: Իսկ որ հայերն իրենք էին խաղողից գինի քամողները և դա ըմպողները, վկայում են հայ ազգագրության բազմաթիվ և բազմաբնույթ նյութերը: Նախ և առաջ հիշենք «Սասնա Մոեր» դյուցազնա-մեպոսում հաճախակի կրկնվող երգման և աղոթքի բանաձևը՝ «Հացն ու գինին, տեր կենդանին»⁹¹: Հացի և գինու պաշտամունքային համատեղման մասին, Մեծամորի առնչությամբ, խոսք եղավ վերևում: Իսկ նրա պետական-պաշտոնական շրջանակներում գտած դրսևորման հին օրինակներից մեկը գտնւմ ենք Քսենոփոնի «Անաբասիսում»: Քսենոփոնի վկայությամբ, Հայաստանի փոխատրապ (հուպարքոս) Տիրիբաոսոս շիմազավ հույն վարձկանների հարձակմանը և փախուստի դիմեց: Բայց «գոավից Տիրիբաոսոս մրահր և նրա մեծ արծաթյա ոտքերով մահիճնեո և ըմպանակներ, ինչպես նաև մարդիկ, որոնք ասացին, թե հացառարներ են և մատուցակներ»⁹²: Ազգագրական նյութերից հիշենք երկու առաժներ. «Մեկանից նեղր կա՝ սեղան որն (հաց դրե—Ս. Պ.), աչքը գինու ճամբեն ա»⁹³ և «Գինի՝ էրմանրն դինի» («Գինի՝ հայի հավատր»)՝⁹⁴:

85 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Указ. соч., с. 650, прим. 2.

86 Հ. Աճառյան. Նշվ. աշխ., հ. 1, էջ 558—559.

87 Հ. Աճառյան. Նշվ. աշխ., հ. 4, էջ 627.

88 А. А. Мартиросян. Город Тейшебанин. По раскопкам 1947—1958 гг., Ереван, 1961, с. 96.

89 Գր. Ղափանցյան. Ուրարտի պատմությունը. Երևան, 1940, էջ 206. ծան. 2; Б. Б. Пиотровскии. Искусство Урарту, с. 37.

90 М. А. Дандамаев, В. Г. Луконин. Культура и экономика древнего Ирана. М., 1980, с. 195. Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ 466.

91 Սասնա Մոեր, հ. Բ, մաս 2, Երևան, 1951, էջ 849.

92 Херн. Anabasis. IV. IV, 21 (Քսենոփոն. Անաբասիս. Վարդանությունը Սիմոն Երկաշարյանի, Երևան, 1970, էջ 94).

93 Ա. Ղանալանյան. Առաժանի. Երևան, 1960, էջ 103.

94 Նույն տեղում, էջ 286.

Աստվածներին հաց զոհաբերելու ժամանակ մեր նախնիները, հին հույների նման, գինի էին հեղում⁹⁵, երբ հարևան խեթերը գինին հեղում էին Արևի աստվածությանը մատուցվող զոհի կենդանու վրա: Ի նկատի առնենք, որ հնդեվրոպական ավանդույթով գինու հեղման ծեսը բաղկացուցիչ մասն էր գերազույցն աստվածության պաշտամունքի⁹⁶, ինչպես է և Խալդիի դեպքում: Որինակ, հին հույների Ձևս Փրկիչը նաև գինու աստվածություն էր, իսկ հռոմեական Յուպիտերի պաշտամունքից անբաժան Լո Veritas տանակատարությունը, որի ժամանակ գինին նրան էր ձոնվում⁹⁷: Հայի պատկերացումով խաղողը նախ և առաջ նրա համար էր, որ նրանից գինի բամեն: Ուստի, խաղողի աչի տեսակը, որ դրա համար պիտանի չէր՝ կարող էլ արհամարհված վիճակում հայտնվել և համապատասխան անուն ստանալ: Հմմտ. բուրբի խաղողը «խաղողի մի տեսակ՝ Լրկայնաձև, նուրբ կապույտ կեղևով, որ ուտում են, բայց գինի չեն պատրաստում նրանից»⁹⁸:

Ասվածները հիմք են տալիս բոլորովին այլ տեսանկյունից դիտարկելու Ուրարտական թագավորության Bialini՝ «Բիայնական (երկրներ)» անվանումը, որը գործածական է բացառապես ուրարտական արձանագրություններում: Պատմական տարբեր դարաշրջաններին վերաբերող տարաբնույթ նյութեր վիճարկում են, որ ամենուրեք բուն ցեղանունների կողքին դործածության մեջ են եղել յսպես կոչված «կեղծ ցեղանունները»: Դրանցից շատերը նշում էին մարդկանց այնպիսի հանրություններ, որոնք մյուսներից տարբերվում էին և դրանց հակադրվում՝ իրենց նյութական մշակույթում եղած որևէ կարևոր տարրի առկայությամբ կամ բացակայությամբ⁹⁹: Այսպես, օրինակ, վայկատուն և ոչխարապահ քրդական ցեղերը հայերին ֆրյա (<արաբ. ֆելյա՝ «մշակ, հողագործ») էին կոչում, որովհետև, ի տարբերություն և ի հակադրություն իրենց, հայերը նստակյաց էին և հողագործ:

Bialini-ի ստուգաբանության գործում մեզ համար ուղենիշ կարող են հանդիսանալ հետևյալ իրողությունները: 1) Հաղարամյակներ շարունակ, ուրարտական դարաշրջանը ներառյալ, գինուն առաջատար դեր է վերապահված եղիլ հայության և նրա նախնիների առօրյա կյանքում և տոնախմբությունների ու ծիսակատարությունների ժամանակ: 2) Ուրարտու՝ Բիայնիի գերազույցն աստված Խալդին ամենամեծ խաղողագործն ու գինեգործն էր և «գեմ չէր սեղան նստելու, քանի որ նրան զոհաբերվող գինին, հարն ու միսը նաև այդ են մատնանշում»¹⁰⁰, Վերջինիս առթիվ ուշագրավ են հետևյալ փաստերը: Աստվածաշնչում Աստված Խ հանդես է գալիս որպես խաղողագործ, Ավետյաց երկիրն համարվում է խաղողուտ կամ խաղողի վաղ, իսկ նրա բնակիչները (մասնավորապես իշխաններն ու ժողովրդի պետերը)՝ նրա ուները¹⁰¹: Հիսուս Քրիստոսը ևս իր Հայր Աստծուն կոչում է մշակ-խաղողագործ, իսկ իրեն՝ խաղողի վաղ¹⁰²: Այս տեսանկյունից պատահական չէ, որ հացի և խաղողից քամված գինու միջոցով էր Փրկիչն իր աշակերտներին մատուցել իր մարմնի և արյան խորհուրդը¹⁰³:

95 Дж. Томсон. Исследования по истории древнегреческого общества. М., 1958, с. 211—212.

96 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Указ. соч., т. 2, с. 652.

97 Նույն տեղում:

98 Ստ. Մ ա յ խ ա յ ա ն ց. Նշվ. աշխ., հ. 2, էջ 126:

99 М. А. Членов. О некоторых индонезийских этнонимях.—Этнонимы, М., 1970, с. 100.

100 Ե. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը. Երևան, 1990, էջ 36, 107, ծան. 39:

101 Иллюстрированная полная популярная Библейская энциклопедия, труд и издание Архимандрита Никифора. М., 1891, с. 123.

102 Յ ո Վ Շ., ԺԵ, 1—6:

103 Մ ա տ թ., ԻԶ, 36—38:

Biaini-ն առնչվելով Ուրարտուփ հիմնական բնակչության և նրա գեղազույն աստծու սիրած զբաղմունքներին՝ խաղողագործություն-գինեգործությունը և գինարբուքին, արդյոք չի՞ նշանակում «գինեգործ» կամ «գինի գործածող»: Այս դեպքում շեղվելու էր Ուրարտուփիայի հիմնական բնակչության՝ բիայնական հայերի, տարբերությունը շրջապատի այն բնակչությունից, որոնք գինեգործությամբ չեն զբաղվել և գինի գործածողներ չեն եղել (սրանց գործածածները կարող էին լինել, ասենք, այլ տեսակների ոգելից խմիչքներ՝ պատրաստված մեղրից, հացահատիկներից, մրգերից): Եթե մեր հարցադրումը հեռու չէ՝ ճշմարտությունից, ապա Biaini-անվանը անվարան կերպով կարող ենք վերագրել հնդեվրոպական ծագում և նրա ամենամոտ զուգահեռները գտնել ի դեմս խեթերեն *u|ana-* «գինի» և պատկերագիր լուվիերեն *wiana*—նույնիմաստ բառերի շմամտ. նաև ազգակից լեզուների նույնարմատ հետևյալ բառերը. հոմեր-հուն. (Ε)οῖνος, լատին. *vīnum* (<**uelno-*), գերման. *Wein*, ռուս. *вино*, հայ. գինի՝ բոլորն էլ **uelno-o-||*u-oip-o-* «գինի» նախաձևից, Սրանց բոլորի հիմքում հ.-ե. **uel-||*ui-* «զալարել, ոլորել, հյուսել» արմատն է՝ խաղողի որթին տրված նրա զալարվել-ոլորվելու և իր հենարանին ոլորվել-փաթաթվելով բարձրանալու պատճառով¹⁰⁴ Ուրարտական արձանագրությունների Biaini-ի ճշգրտված տառադարձությունը, որոշ կասկածով, Ի. Մ. Դյակոնովը համարում է **V(1)ālnə-¹⁰⁵*, վերջինիս հնչյունական տեսքը, նրա կրողների հիմնական զբաղմունքի և պաշտամունքի հետ միասին, զալիս է հաստատելու, որ Biaini-||**V(1)ālnə-¹⁰⁵* ունեցել է «գինեգործական» իմաստ:

О НАХАРАРСКОМ РОДЕ ГНУНИ И КУЛЬТЕ ВИНА

САРГИС ПЕТРОСЯН

Р е з ю м е

По сообщениям Мовсеса Хоренаци, родовое имя нахараров Гнуни (Գնունի), происходит от арм. *գինի* гини («вино»), а их предок Гин (Գին) был назначен царским виночерпием. Родовое владение нахараров Гнуни находилось в области Алиовит, которая в урартский период также носила «виннос» название Куриа (Quria). Как предполагает И. М. Дьяконов, в основе хоронима Биаинили лежит самоназвание жителей Урарту-*biainə-||*v(1)ālnə*. По нашему мнению, оно находится в прямой связи со следующими словами индоевропейских языков: хетт. *u|ana-* «вино», нерогл. лув. *wiāla*, греч.-гомср. (Ε)οῖνος и т. пр. Появление названия **v(1)ālnə* должно быть обусловлено процессом дифференциации племен Армянского нагорья по хозяйственно-культурным типам задолго до появления здесь государства. В данном случае имеется в виду факт широкого распространения у этой части предков армян как виноделия, так и культа вина.

¹⁰⁴ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Указ. соч., т. 2, с. 647—648. 649—650.

¹⁰⁵ И. М. Дьяконов. Хурритский и урартский языки.—Языки Азии и Африки. Языки древней Средней Азии, т. III, М., 1979, с. 56.

ABOUT THE NOBILIARY FAMILY GNOUNY AND THE CULT OF WINE

SARGIS PETROSYAN

Summary

According to Movses Khorenatsi the noblemen Gnouny's family-name (Gnuni, *Գնունի*) originated from the Armenian word *glni* (*գինի*) «wine» and their ancestor *Ghin* (*Գին*) had been appointed the king's wine-scooper. Their patrimonial estate was in the province of *Aliovit* which in the period of *Urartu* bore the «vinous» name of *Quria*. As it is supposed by *Dyakonov I. M.* the country name *Biainile* originates from *biainə-// *v(i) āinə-*, the name given to their country by the people of *Urartu*. The author of the article is of the opinion that this is in direct correlation with the following Indo-European words: *Hett. uiana-«wine»/hieroglyph. luv. wiana «wine», Homeric-Greek (E) οἶνος «wine», etc.* The appearance of the word **v(i)āinə* must have been connected with the earlier process of economic and cultural differentiation among the tribes inhabiting the *Armenian Highland* which had taken place long before the formation of the state on that territory. The present case deals with the fact that wine-making and the cult of wine were widely practised by that part of the ancestors of the Armenians.